

Արձանագրություն N 4

__ՀԲԿ__ ԳԱՊՁԲ_21/0201__ ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի
(ARMEPS) միջոցով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի
նիստի

ք.Հրազդան

14 հունվար 2021թ.

Ժամը 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝

Հանձնաժողովի քարտուղար՝

Վ.Հովհաննիսյան

Լ.Մարգարյան

Կ.Բազրատյան

Լ.Նավասարդյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստացված պարզաբանման և բողոք-դիմումի վերաբերյալ փաստաթղթերի ներկայացման մասին
3. Գնահատման մասին

Ընդունվել է որոշում կողմ՝ __3__, դեմ՝ __0__

2. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից պարզաբանման ստացման մասին

(Վ.Հովհաննիսյան)

08. հունվարի 2021թ. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստացվել է պարզաբանում՝ „Լևոն Լամարա Դեղատուն,, ՍՊԸ-ի դիմում – բողոքի վերաբերյալ, համաձայն որի ԱՏԳ ԱԱ 9018 և 3005 ծածկագրերին դասվող ապրանքների ներմուծումը ազատված է ԱԱՀ-ից: Բողոք- դիմումի հիման վրա „Լեյկո,, ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են փաստաթղթեր (29.06.2001թ. ՀՀ օրենք, ապրանքի ներկրման հայտարարագիր, սերտիֆիկատ), որոնց համաձայն 18-րդ և 53րդ չափաբաժինները դասվում են 52082110000 ծածկագրին և հարկվում են ԱԱՀ-ով: Նշվածից ելնելով տվյալ չափաբաժինների գծով հանձնաժողովը որոշեց հաղթող ճանաչել, Լեյկո,,ՍՊԸ-ին: Փաստաթղթերը կցվում են:

4. Գնահատման մասին

(Վ.Հովհաննիսյան)

Առաջին տեղ զբաղեցնող մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ հայտ ներկայացրած և բավարար գնահատված մասնակիցներից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից

Հ/Հ	Մասնակիցը	Չափաբաժինը
<u>առաջին տեղ զբաղեցնող ճանաչել՝</u>		
1	„Կաննի Ֆարմ,,ՍՊԸ	51.79
2	„Լինարե,,ՍՊԸ	96.98
3	„ՍՄՏ Բեստ,,ՍՊԸ	35.36.37.38.86.87
4	„Վիոլա,,ՍՊԸ	95
5	„Սքսես,,ՍՊԸ	7
6	„Լևոն Լամարա դեղատուն,,ՍՊԸ	41
7	„Մի վնասիր,,ՍՊԸ	55
8	„Լևոն և Լամարա,,ՍՊԸ	29
9	„Աննարկա,,ՍՊԸ	28
10	„Մարգ Ֆարմացիա,, ՍՊԸ	47
11	„Լեյկո,,ՍՊԸ	1.5.21.42.61.18.53
12	„Նատալի Ֆարմ,,ՍՊԸ	2.4.9.10.11.14.15.20.49.60.85.
13	„Անիկո Ֆարմ,,ՍՊԸ	3.12.13.17.19.33.34.39.57.58.59.77
14	„ՍԴԴ Գրուպ,, ՍՊԸ	82
15	„Խաչպար,,ՍՊԸ	92
16	„Երմեյ,,ՍՊԸ	62.63.76
17	„Էֆ Բի Էյ ,,ՍՊԸ	6.8.22.23.24.25.50.52.54.64.65.66.67.68.69.70.71.7 2.73.74.75.83.84.99
18	„Թագ Հեմ,, ՍՊԸ	88.90.91.100
19	„Մեդտեխստերվիս,,ՍՊԸ	16
<u>երկրորդ տեղ զբաղեցնող ճանաչել՝</u>		
1	„Մեգի Էլ,,ՍՊԸ	20.60.62.79.
2	„Լինարե,,ՍՊԸ	1.87.
3	„ՍՄՏ Բեստ,,ՍՊԸ	50
4	„Վիոլա,,ՍՊԸ	83.
5	Միքայել Բադալյան Ա/Ձ	7.
6	„Լևոն Լամարա դեղատուն,,ՍՊԸ	33.39.85.88.99.
7	„Էսզեթ Ֆարմա ,,ՍՊԸ	28
8	„Լևոն և Լամարա,,ՍՊԸ	3.13.53.64.65.73
9	„ԱՄ Մեդիքլ Գրուպ,,ՍՊԸ	54
10	„Մարգ Ֆարմացիա,, ՍՊԸ	17
11	„Լեյկո,,ՍՊԸ	35.36.37.38.52.67.68.69.70.71.72.82.98.

12	„Նատալի Ֆարմ,,ՍՊԸ	5.6.8.34.41.57.58.61.77.18.53
13	„Անիկո Ֆարմ,,ՍՊԸ	9.10.11.14.22.23.24.25.42.84.
14	„Ֆարմեգուս,, ՍՊԸ	96
15	„Խաչապար,,ՍՊԸ	12.49.86.
16	„Երմեդ,,ՍՊԸ	29.47.51
17	„Էֆ Բի Էյ ,,ՍՊԸ	2.4.19.21.95.
18	„Դեզսերվիս,,ՍՊԸ	55
19	„Մեդտեխսերվիս,,ՍՊԸ	15.59.66.74.75.90.92.100

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

5.Մրցույթը չկայացած լինելու մասին

(Վ.Հովհաննիսյան)

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 40-րդ կետի 5-րդ մասի **26-րդ, 27-րդ, 30 -րդ, 31-րդ, 32-րդ, 40-րդ, 43-րդ, 44-րդ, 46-րդ, 48-րդ, 56-րդ, 93-րդ, 94-րդ, 45-րդ, 89-րդ և** „Գնումների մասին,,ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ կետի **78-րդ, 80-րդ, 81-րդ, 97-րդ** չափաբաժինների գծով մրցույթը համարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

6. Պայմանագիր կնքելու որոշումը և անգործության ժամկետը հաստատելու մասին

(Ա.Ղազարյան)

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակել տեղեկագրում և անգործության ժամկետ սահմանել ծանուցման օրվան հաջորդող օրվանից հաշված 5-րդ օրացուցային օրը :

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝

Գնահատող անդամներ՝

Քարտուղար՝



Վ.Հովհաննիսյան



Լ.Մարգարյան



Կ.Բազրատյան



Լ.Նավասարդյան

Հրազդանի ԲԿ-ի N <<ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/0201>>

ծածկագրով մրցույթի

Գնահատող հանձնաժողովին

<<ԼԵՎՈՆ ԵՎ ԼԱՄԱՐԱ Դեղատուն>> ՍՊԸ

ՀՎՀՀ 00021334

Հեռ.091414363

Էլ.փոստ՝ levonlamara@gmail.com

Կոմերցիոն տնօրեն՝ Գ.Մոսինյանից

ԴԻՄՈՒՄ՝

Հարգելի գործընկերներ:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ ս.թ. դեկտեմբերի 10-ին ստացել ենք Հրազդանի ԲԿ-ի N <<ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/0201>> ծածկագրով էլեկտրոնային մրցույթի արդյունքների վերաբերյալ 04.12.20թ. բացման նիստի թիվ 2 արձանագրությունը, որում արտացոլված են մասնակիցների գնային առաջարկները:

Ուսումնասիրելով այդ առաջարկները պարզեցինք, որ «Լեյկո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում Հրավերի թիվ 18, 35, 36, 37, 38, 50, 52 և 53-րդ չափաբաժինների մասերով առանձնացված տողերով հաշվարկված են ԱԱՀ-ի գծով վճարվելիք գումարների չափերը, որոնք հանդիսանում են գնումների գործընթացները կարգավորող ՀՀ Օրենսդրական պահանջների խախտումներ հետևյալ հիմնավորումներով՝.

1) Հրավերի թիվ 35, 36, 37 և 38-րդ չափաբաժինների մասերով պահանջվում են տարբեր չափսերի ներարկիչներ, իսկ թիվ 50-րդ չափաբաժնի մասով պահանջվում են Դեղերի ներարկման համակարգեր:

ա) Համաձայն <<Արտաքին Տնտեսական Գործունեության Ապրանքների միասնական Անվանացանկ>>-ի (ԱՏԳ ԱԱ) դասակարգման՝ Հրավերի թիվ 35, 36, 37 և 38-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ներարկիչները դասակարգված են **9018** ծածկագրին՝ **<<9018 Բժշկության, վիրաբուժության, ատամնաբուժության կամ անասնաբուժության մեջ օգտագործվող սարքեր եւ սարքվածքներ՝ ներառյալ սցինտիգրաֆիկական ապարատուրաները, էլեկտրաբժշկական այլ ապարատուրաներ եւ տեսողությունը հետազոտելու սարքեր.>>**, պատկանող **<< 9018 31 – – ներարկիչներ՝ ասեղներով կամ առանց ասեղների.>>** դասակարգիչներով, իսկ Հրավերի թիվ 50-րդ չափաբաժնի մասով պահանջվող Դեղերի ներարկման համակարգերը դասակարգված են **9018** ծածկագրին՝ **<<9018 Բժշկության, վիրաբուժության, ատամնաբուժության կամ անասնաբուժության մեջ օգտագործվող սարքեր եւ սարքվածքներ՝ ներառյալ սցինտիգրաֆիկական ապարատուրաները, էլեկտրաբժշկական այլ ապարատուրաներ եւ տեսողությունը հետազոտելու սարքեր.>>**, պատկանող **<< 9018 90 500 1 – – – համակարգեր՝ արյան վերցման ու փոխներարկման, արյան փոխարինիչների եւ ինֆուզիոն լուծույթների համար>>** դասակարգիչով:

բ) Համաձայն <<ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ԶԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ՝ ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ԱՅՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՑ ՆԵՐՄՈՒԾՈՒՄՆ ԱԶԱՏՎԱԾ Է ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻՑ>> ՀՀ Օրենքի հոդված 1-ով հաստատված ցանկի՝ **9018** ԱՏԳ ԱԱ ծածկագրին՝ **<<9018** Սարքեր և հարմարանքներ՝ բժշկության, վիրաբուժության, ատամնաբուժության կամ

անասնաբուծության մեջ կիրառվող (ներառյալ՝ սցինտիգրաֆիկական ապարատները), էլեկտրաբժշկական այլ ապարատուրաներ և սարքեր՝ տեսողությունը հետազոտելու համար >> պատկանող ապրանքները ՀՀ տարածք ներմուծման ժամանակ ազատված են ԱԱՀ վճարելուց:

զ) Համաձայն ՀՀ Կառավարության 2017թ. հոկտեմբերի 5-ի <<ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻՑ ԱԶԱՏՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 1317-Ն որոշման Հավելված 3-րդի թիվ 5-րդ կետի 1-ին մասի՝

<<Ավելացված արժեքի հարկից ազատման արտոնության կիրառության նպատակով բժշկական տեխնիկային դասվում են՝

- 1) Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի դասակարգչի **9018, 9019, 9020, 9022, 9023, 9402** խմբերին դասվող բժշկական տեխնիկան”>>

դ) Համաձայն <<Ավելացված Արժեքի Հարկի Մասին>> ՀՀ օրենքի՝ 15-րդ հոդվածի սահմանման՝ <<Հոդված 15. ԱԱՀ-ից ազատելը՝ հարկվող շրջանառության նկատմամբ այն չհաշվարկելն է:>>

2) Հրավերի թիվ 18-րդ չափաբաժնի մասով պահանջվում է բժշկական թանգիֆ, իսկ թիվ 52 և 53-րդ չափաբաժինների մասերով պահանջվում են տարբեր չափսերի վիրակապեր:

ա) Համաձայն <<Արտաքին Տնտեսական Գործունեության Ապրանքների միասնական Անվանացանկ>>-ի (ԱՏԳ ԱԱ) դասակարգման՝ Հրավերի թիվ 18, 52 և 53-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքները դասակարգված են **3005** ծածկագրին՝ <<**3005 Բամբակ, թանգիֆ, փաթույթային վիրակապեր եւ նմանատիպ արտադրատեսակներ (օրինակ՝ վիրակապական նյութեր, կաշուն սպեղանիներ, թրջոցալաթեր)**՝ ներծծված կամ ծածկված դեղագործական նյութերով կամ մանրածախ վաճառքի համար բաժնեծրարված տարաներում կամ փաթեթվածքներում, որոնք նախատեսված են բժշկության, վիրաբուժության, ատամնաբուժության կամ անասնաբուժության մեջ օգտագործելու համար>> պատկանող դասակարգչով:

բ) Համաձայն ՀՀ Կառավարության 2017թ. հոկտեմբերի 5-ի <<ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻՑ ԱԶԱՏՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 1317-Ն որոշման Հավելված 3-րդի թիվ 3-րդ կետի 1-ին մասի՝ <<3. Բժշկական նշանակության ապրանքները՝ ախտորոշման, կանխարգելման, բուժման, անզգայացման ժամանակ օգտագործվող այն բժշկական նշանակության ապրանքներն են, որոնք՝

- 1) դասվում են Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի դասակարգչի **3005, 3006, 3701 10, 3702 10, 3707 90, 4014, 5601 21, 5601 22** ծածկագրերին>>

գ) Համաձայն <<Ավելացված Արժեքի Հարկի Մասին>> ՀՀ օրենքի՝ 15-րդ հոդվածի սահմանման՝ <<Հոդված 15. ԱԱՀ-ից ազատելը՝ հարկվող շրջանառության նկատմամբ այն չհաշվարկելն է:>>

ԱՅՄԻՆՔՆ՝ <<ԼԵՅԿՈ>> ՍՊԸ-ի ԿՈՂՄԻՑ ՀՐԱՎԵՐԻ ԹԻՎ 18, 35, 36, 37, 38, 50, 52 և 53-րդ ՉԱՓԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՄԱՍԵՐՈՎ ՊԱՀԱՆՋՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՅԻՆ

ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԱԱՀ-ի ՀԱՇՎԱՐԿԵԼԸ և ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ ՀԱԿԱՍՈՒՄ Է ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆԸ:

Հարգելի գործընկերներ:

Համաձայն ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման թիվ 67 կետի սահմանումների՝ <<Գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:>>

Հարգելի գործընկերներ:

Խնդրում ենք ստուգել մեր կողմից ներկայացված վերոգրյալ փաստերի և իրավական ակտերի հավաստիությունը, որոնք հիմք կհանդիսանան Հրավերի թիվ 18, 35, 36, 37, 38, 50, 52 և 53-րդ չափաբաժինների մասով <<Լեյկո>> ՍՊԸ-ի կողմից ներկայացրած Հավելված թիվ 2՝ <<Գնային առաջարկ>>-ում առանձնացված տողով ԱԱՀ-ի գծով վճարվելիք գումարի չափի հաշվարկված լինելը որակել որպես իրականությանը չհամապատասխանող, և մերժել <<Լեյկո>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ Հրավերի թիվ 18, 35, 36, 37, 38, 50, 52 և 53-րդ չափաբաժինների մասով:

Հարգանքով՝

ԼԵՎՈՆ ԵՎ ԼԱՄԱՐԱ ԴԵՂԱՏՈՒՄՍԻՍԸ

Կոմերցիոն տնօրեն՝ Գ.Մոսիսյան

14/12/2020թ.





Համարը N 1317-Ն
 Տիպը Որոշում
 Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2017.11.01/65(1340)
 Հոդ.1055

Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն
 Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ
 Վավերացնող մարմինը
 Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 01.01.2018

Տեսակը Հիմնական
 Կարգավիճակը Գործում է
 Ընդունման վայրը Երևան

Ընդունման ամսաթիվը 05.10.2017
 Ստորագրման ամսաթիվը 23.10.2017
 Վավերացման ամսաթիվը
 Ուժը կորցնելու ամսաթիվը

Կապեր այլ փաստաթղթերի հետ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻՑ ԱԶԱՏՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 հոկտեմբերի 2017 թվականի N 1317-Ն

ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻՑ ԱԶԱՏՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 4-րդ, 6-րդ և 12-րդ կետերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել

1) դպրոցական գրերի և նոտայի տետրերի, նկարչական ալբոմների, մանկական և դպրոցական գրականության, դպրոցական ուսումնական հրատարակությունների, բուհերի, մասնագիտացված գիտական կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի հրատարակած գիտական և ուսումնական հրատարակությունների օտարման, հանրակրթական հիմնական ծրագրերի շրջանակներում աշխատանքների կատարման՝ ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունների կիրառության շրջանակը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) նախադպրոցական հիմնարկներում երեխաներին պահելու, տուն-ինտերնատներում, մանկատներում, արատներ ունեցող երեխաներ կամ հաշմանդամներ խնամող հաստատություններում, ծերանոցներում գտնվող անձանց խնամքի հետ կապված ծառայությունների մատուցման, ինչպես նաև խնամվողների կողմից այնտեղ պատրաստված ապրանքների օտարման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման՝ ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունների կիրառության շրջանակը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) դոնորային արյան և դրա բաղադրամասերի, մայրական կաթի, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, բժշկական տեխնիկայի և բժշկական նշանակության ապրանքների օտարման, բժշկական կազմակերպություններում բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում պացիենտների պատրաստած ապրանքների օտարման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման՝ ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունների կիրառության շրջանակը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության
 վարչապետ

2017 թ. հոկտեմբերի 23
 Երևան

Կ. Կարապետյան

Հավելված N 1
 ՀՀ կառավարության 2017 թվականի
 հոկտեմբերի 5-ի N 1317-Ն որոշման

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՐԵՐԻ ԵՎ ՆՈՏԱՅԻ ՏԵՏՐԵՐԻ, ՆԿԱՐՉԱԿԱՆ ԱԼՔՈՄՆԵՐԻ, ՄԱՆԿԱԿԱՆ ԵՎ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԴՊՐՈՑԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԲՈՒՀԵՐԻ, ՄԱՆԱԳԻՏԱՑԿԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ, ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ՝ ԱՎԵԼԱՑԿԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻՑ ԱԶԱՏՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

1. Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 4-րդ կետերի՝ ավելացված արժեքի հարկից ազատվում են դպրոցական գրերի և նույնի տետրերի, նկարչական ալբոմների, մանկական և դպրոցական գրականության, դպրոցական ուսումնական հրատարակությունների, բուհերի, մասնագիտացված գիտական կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի հրատարակած գիտական և ուսումնական հրատարակությունների օտարումը, հանրակրթական հիմնական ծրագրերի շրջանակներում աշխատանքների կատարումը:

2. Դպրոցական գրելու տետրեր են համարվում մինչև 6 տպագրական մամուլ (98 էջ) ծավալով տողավորված կամ վանդակավոր էջերով տետրերը:

3. Մանկական գրականությանն է դասվում նախադպրոցական (մինչև 6 տարեկան) տարիքի, տարրական (1-4-րդ դասարանցի) և միջին (5-9-րդ դասարանցի) դպրոցական տարիքի երեխաների համար նախատեսված գրականությունը: Մանկական գրականության տեսակ է նաև գիրք-խաղալիքը: Մանկական գրականության տիտղոսաթերթում կարող է կատարվել համապատասխան գրառում: Հրատարակչի կամ իրացնողի կողմից մանկական գրականության օտարումն ազատվում է ավելացված արժեքի հարկից, եթե տվյալ գրականությունը Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից պաշտոնապես հաստատվել կամ երաշխավորվել է որպես մանկական:

4. Դպրոցական գրականություն է համարվում տարրական, միջին և ավագ դպրոցների սովորողների համար նախատեսված և ուսումնական ծրագրային նյութի յուրացման համար անհրաժեշտ ուսումնաօժանդակ գրականությունը: Որպես ուսումնաօժանդակ գրականություն դիտվում են ուսումնադիտողական պարագաները, ուսումնադիտակտիկ նյութերը, շտեմարանները, թեստերը, վարժությունների ժողովածուները, քրեստոմատիաները, խնդրագրքերը (խնդիրների ժողովածուները), քարտեզները, ուսումնական ծրագրերի յուրացման համար նախատեսված բառարանները, առկանները, տեղեկատուները, մեթոդական ձեռնարկները: Դպրոցական հրատարակությունների օտարումն ազատվում է ավելացված արժեքի հարկից, եթե դրանք պաշտոնապես հաստատվել կամ երաշխավորվել են Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից՝ որպես դպրոցական:

5. Ուսումնական հրատարակությունը հրատարակության տեսակ է, որը պարունակում է գիտական կամ կիրառական բնույթի համակարգված տեղեկություններ՝ շարադրված ուսումնասիրման և դասավանդման համար հարմար ձևով և նախատեսված է տարբեր տարիքի և ուսուցման աստիճանի սովորողների համար: Ուսումնական հրատարակության տեսակներ են դասագիրքը, ուսումնական ձեռնարկը, ուսումնամեթոդական ուղեցույցները, քրեստոմատիան, ուսումնական դիտողական ձեռնարկը, ուսումնամեթոդական ձեռնարկը, ուսումնական ծրագիրը, պրակտիկումը: Ուսումնական հրատարակությունների օտարումն ազատվում է ավելացված արժեքի հարկից, եթե դրանք պաշտոնապես հաստատվել կամ երաշխավորվել են Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից:

6. Մասնագիտացված գիտական կազմակերպություն է ճանաչվում գիտական գործունեություն իրականացնող ցանկացած կազմակերպություն՝ անկախ կազմակերպարարական և սեփականության ձևերից, ինչպես նաև գիտական աշխատողների հասարակական միավորումը: Գիտական կազմակերպությունները դասակարգվում են գիտահետազոտական ինստիտուտների, բարձրագույն ուսումնական հաստատությունների, գիտական թանգարանների և գրադարանների, փորձարարական ստորակտորական, նախագծակոնստրուկտորական, նախագծատեխնոլոգիական և գիտական գործունեություն իրականացնող այլ կազմակերպությունների:

7. Գիտական հրատարակությունը հրատարակության տեսակ է, որը պարունակում է տեսական և (կամ) փորձարարական հետազոտությունների արդյունքներ, ինչպես նաև գիտական եղանակներով ու մեթոդներով հրատարակության պատրաստված մշակութային և պատմական հուշարձաններին վերաբերող նյութեր: Գիտական հրատարակության տեսակներ են գիտական մենագրությունը, ատենախոսության սեղմագիրը (ավտոռեֆերատ), պրեպրինտը, գիտական համաժողովի (համագումարի, գիտաժողովի) զեկուցումների (հաղորդումների) թեզիսները, համաժողովի (համագումարի, գիտաժողովի) նյութերը, հոդվածները, գիտական աշխատանքների (աշխատությունների) ժողովածուներ, ինչպես նաև գիտության որևէ բնագավառին վերաբերող հին կամ նոր բնագրի (տեքստի) մեկնաբանված, բացատրված, ծանոթագրված և անհրաժեշտ ցուցիչ-ցանկերով օժտված հրատարակությունը, թանգարանային-մշակութային արժեքների ընդունված կամ հատուկ մշակված սկզբունքներով արված նկարագրություն-մեկնաբանությունները, մեկնաբանությունները: Գիտական հրատարակության տեսակ է նաև գիտական ամսագիրը: Գիտական է համարվում այն ամսագիրը, որը պարունակում է տեսական և կիրառական բնույթի հետազոտություններ, հոդվածներ և նյութեր ու նախատեսված է գիտաշխատողների համար (նպատակային մշակությունից կախված՝ գիտական ամսագրերը լինում են գիտատեսական, գիտագործական և գիտամեթոդական: Այն գիտագործական ամսագիրը, որը պարունակում է տեխնիկական գիտություններին վերաբերող հոդվածներ, նյութեր և ռեֆերատներ, կոչվում է գիտատեխնիկական ամսագիր):

8. Գիտական և ուսումնական հրատարակությունները պետք է պարունակեն անհրաժեշտ ելքային տվյալներ: Մասնավորապես՝ դրանց մեջ պարտադիր պետք է նշվեն գիտական հրատարակության մասնագետ գրախոսների, խմբագրական հանձնախմբի (կոլեգիայի) (առկայության դեպքում) անդամների անուններն ու ազգանունները, տեղեկություններ գիտական հրատարակության նպատակային մշակությունից անհրաժեշտ (ներառյալ ուսումնական կամ գիտական համարվելու մասին), հրատարակչի և այն գիտական կազմակերպության անվանումները, որի անունով հրատարակվում է տվյալ հրատարակությունը, տեղեկություն հրատարակությունը որպես ուսումնական հաստատվելու մասին և այլն: Հրատարակության տիտղոսաթերթի

մերեսին կամ վերջին էջում տրվում է գրքի բովանդակությունը համառոտ ներկայացնող ծանուցում (նստացիա):

9. Գիտական ամսագրերը, ժողովածուները և տեղեկատվական հրատարակությունները պետք է պարունակեն «Ամսագրեր, ժողովածուներ, տեղեկատվական հրատարակություններ. Հրատարակվող նյութերի հրատարակչական ձևավորում» ԳՕՍՏ 7.5-98 ստանդարտով պահանջվող տվյալներ: Հրատարակչի մոտ պետք է պահվեն հրատարակության գիտականությունը հիմնավորող կամ ուսումնական համարվելը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը (գիտական կազմակերպության (գիտական խորհրդի) միջնորդագիրը կամ որոշումը նյութը տպագրելու վերաբերյալ, գիտական փորձագետների (հանձնաժողովի) կարծիքները, մասնագետների գրախոսականները և այլն):

10. Այն հրատարակությունները, որոնք կարող են դասակարգվել և որպես գիտական կամ ուսումնական, և որպես այլ տիպի հրատարակություն, ավելացված արժեքի հարկից ազատվում են, եթե դրանք Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից պաշտոնապես հաստատվել են որպես գիտական և (կամ) ուսումնական հրատարակություն:

11. Հանրակրթական հիմնական ծրագրերի շրջանակներում աշխատանքների կատարման առնչվող հասկացությունները մեկնաբանվում են «Կրթության մասին», «Հանրակրթության մասին» և «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների իմաստով:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար

Վ. Ստեփանյան

Հավելված N 2

ՀՀ կառավարության 2017 թվականի
հոկտեմբերի 5-ի N 1317-Ն որոշման

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՐԵՒԱՆԵՐԻՆ ՊԱՇՏՈՒ, ՏՈՒՆ-ԻՆՏԵՐՆԱՏԵՐՈՒՄ,
ՄԱՆԿԱՏԵՐՈՒՄ, ԱՐԱՏՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆԵՐ ԿԱՍ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐ ԽՆԱՄՈՂ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ, ԾԵՐԱՆՈՑՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՁԱՆՑ ԽՆԱՄՔԻ ՀԵՏ ԿԱՊԿԱԾ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԽՆԱՄՎՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՅՆՏԵՂ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ
ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ, ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ԱԿԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻՑ ԱՁԱՏՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

1. Ավելացված արժեքի հարկից ազատվում է նախադպրոցական հիմնարկներում երեխաներին պահելու հետ կապված՝ այդ հաստատությունների կողմից վճարովի, մասնակի հատուցմամբ և անվճար մատուցվող ծառայությունների (այդ թվում՝ լեզվի ուսուցման, երգի, պարի, նկարչական և այլ խմբերի ու խմբակների կողմից մատուցվող ծառայությունների) մատուցումը: Նախադպրոցական հիմնարկներ են համարվում 0-ից մինչև 6 տարեկան երեխաների համար նախատեսված նախադպրոցական ուսումնադաստիարակչական հիմնարկները (հաստատությունները), այդ թվում՝ պետական (համայնքային) և գերատեսչական ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունները, երեխաներին պահելու հետ կապված ծառայություններ մատուցող ոչ պետական քոլեջները, ստուդիաները, վարժարանները, մանկապարտեզները, պարտեզները: Նախադպրոցական ուսումնադաստիարակչական հաստատությունները դասակարգվում են սովորական և հատուկ նշանակության (կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող):

2. Ավելացված արժեքի հարկից ազատվում է տուն-ինտերնատներում (բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր և հատուկ տիպի տարեցների շուրջօրյա խնամքի հաստատություններում) գտնվող անձանց խնամքի հետ կապված՝ այդ հաստատությունների կողմից վճարովի, մասնակի հատուցմամբ և անվճար մատուցվող ծառայությունների մատուցումը:

3. Ավելացված արժեքի հարկից ազատվում են մանկատներում, արատներ ունեցող երեխաներ կամ հաշմանդամներ խնամող հաստատություններում (բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) հաստատություններում) գտնվող անձանց խնամքի հետ կապված այդ հաստատությունների կողմից վճարովի, մասնակի հատուցմամբ և անվճար մատուցվող ծառայությունները (այդ թվում՝ լեզվի ուսուցման, երգի, պարի, նկարչական և այլ խմբերի ու խմբակների կողմից մատուցվող ծառայությունները): Արատներ ունեցող երեխաներ խնամող հաստատություններ են համարվում այն հիմնարկները, որտեղ իրականացվում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող մինչև 16 տարեկան երեխաների խնամքը, կրթությունը, բուժապասարկումը և այլն: Արատներ ունեցող երեխաներ խնամող հաստատություններ են խոսքի ծանր խանգարումով, լեզվի հնչարտաբերման թերություններով, թույլ տեսող, կույր, թույլ լսող, խուլ, հենաշարժական համակարգի խանգարումներով, մտավոր թերզարգացած, հոգեպես թերզարգացած, հաճախակի հիվանդացող, տարբեր շեղումների ծանր զուգակցումով հիվանդ երեխաների համար նախատեսված դպրոցները և նախադպրոցական ուսումնադաստիարակչական հաստատությունները:

4. Ավելացված արժեքի հարկից ազատվում են սույն հավելվածի 1-4-րդ կետերում նշված հաստատություններում խնամվողների կողմից այնտեղ պատրաստված ապրանքների օտարումը, աշխատանքների կատարումը և ծառայությունների մատուցումը:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի

Վ. Ստեփանյան

դեկավար

Հավելված N 3

ՀՀ կառավարության 2017 թվականի
հոկտեմբերի 5-ի N 1317-Ն որոշման

ՂՈՏՈՐԱՅԻՆ ԱՐՅԱՆ ԵՎ ՂՐԱ ԲԱՂԱՂՐԱՄԱՍԵՐԻ, ՄԱՅՐԱԿԱՆ ԿԱԹԻ, ՊՐՈԹԵԶԱՕՐԹՈՊԵԴԻԿ
ՊԱՐԱԳԱՆԵՐԻ, ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ,
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿԱՆ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՊԱՑԻԵՆՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ, ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԿԱՏԱՐՄԱՆ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ՝ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻՑ ԱԶԱՏՄԱՆ
ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱԶՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

1. Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետի՝
ավելացված արժեքի հարկից ազատվում են դոնորային աղյան և դրա բաղադրամասերի, մայրական կաթի,
պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, բժշկական տեխնիկայի և բժշկական նշանակության ապրանքների
օտարումը, բժշկական կազմակերպություններում բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում
պացիենտների պատրաստած ապրանքների օտարումը, աշխատանքների կատարումը, ծառայությունների
մատուցումը:
2. Մայրական կաթի փոխարինիչները համարվում են «մանկական սնունդ» և ավելացված արժեքի հարկից
ազատման արտոնության կիրառության առումով հաշվի չեն առնվում:
3. Բժշկական նշանակության ապրանքները՝ ախտորոշման, կանխարգելման, բուժման, անզգայացման
ժամանակ օգտագործվող այն բժշկական նշանակության ապրանքներն են, որոնք՝
1) դասվում են Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային
անվանացանկի դասակարգչի 3005, 3006, 3701 10, 3702 10, 3707 90, 4014, 5601 21, 5601 22 ծածկագրերին:
- 2) ներառված են սույն հավելվածի բժշկական նշանակության ապրանքների ցանկում:
4. Ավելացված արժեքի հարկից ազատման արտոնության կիրառության նպատակով պրոթեզաօրթոպեդիկ
պարագաներին դասվում են՝
1) Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային
անվանացանկի դասակարգչի 9021 խմբին դասվող պրոթեզաօրթոպեդիկ պարագաները:
2) հաշմանդամի սայլակը:
3) օրթոպեդիկ կոշիկները:
4) պրոթեզի կոշիկը:
5. Բժշկական տեխնիկա են համարվում դեղերի պատրաստման, բուժման, ախտորոշիչ հետազոտությունների
անցկացման, վերականգնողական բուժման և այլ բնույթի բժշկական օգնության ու սպասարկման ծառայություններ
իրականացնելու համար անհրաժեշտ բժշկական հատուկ և օժանդակ ապարատները, գործիքները,
տրանսպորտային միջոցները, սարքերը և այլ սարքավորում: Ավելացված արժեքի հարկից ազատման
արտոնության կիրառության նպատակով բժշկական տեխնիկային դասվում են՝
1) Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային
անվանացանկի դասակարգչի 9018, 9019, 9020, 9022, 9023, 9402 խմբերին դասվող բժշկական տեխնիկան:
2) ներմուծվող այն տեխնիկան և սարքերը, որոնց ուղեկցող փաստաթղթերում (տեխնիկական անձնագիր,
հաշվարկային և բեռնառաքման այլ փաստաթուղթ) նշված է, որ դրանք նախատեսված են բժշկական օգնության և
սպասարկման համար:
6. Ավելացված արժեքի հարկից ազատման արտոնության կիրառության նպատակով ավելացված արժեքի
հարկից ազատվում են բժշկական կազմակերպություններում բժշկական օգնության և սպասարկման
շրջանակներում պացիենտների պատրաստած ապրանքների օտարումը, աշխատանքների կատարումը և
ծառայությունների մատուցումը: Պացիենտ է համարվում բժշկական օգնության և սպասարկման սուբյեկտ
հանդիսացող ֆիզիկական անձը:

ՑԱՆԿ

ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ

1. Տարբեր տեսակի և չափի ռետինե բալոններ
2. Տարբեր չափերի Մարտենսի վիրակապեր (բինտ)
3. Տարբեր տեսակի և չափի ռետինե ջեռակներ
4. Տարբեր տեսակի և չափի բժշկական, կենցաղային ռետինե սպունգ
5. «Կեռա» տիպի T-ձև դրենաժներ
6. Էսմարխի տիպի ռետինե արնեկանգ լարան (ժգուտ) մետաղական ճարմանդ և շղթայիկով
7. Նույնը պլաստմասսայե սկեռակով և ճարմանդով
8. Տարբեր տեսակի և չափի արնեկանգ լարաններ
9. Տարբեր տեսակի և չափի ստամոքսի, սնուցող, դուղեմալ զոնդեր
10. Տրանսալային ինտուբատորներ
11. Տարբեր տեսակի և չափի կոկլանքնոդունիչներ
12. Տարբեր տեսակի և չափի կոլպեյնիներներ լատեքսից
13. Տարբեր տեսակի և չափի կատետորներ

14. Մոմլաթ բժշկական, պոլիքլորվինիլային (պլաստիկատ կոմպոզիցիան)
15. Փոքրիկ թասակ «ԿՌ» և կանացի միջոց անձնական նախապահպանության (պրոֆիլակտիկայի) համար
16. Օղակ արգանդի
17. Ռետինե օղակ և բռնիչ (դեղորայքի փաթեթների ամրացման համար)
18. Օղակ մանկական, ռետինե
19. Տարբեր չափերի «Պարույր» տեսակի ներարգանդային հակաբեղմնավորիչներ
20. Ծորակներ՝ էրոնիտե թթվածնային բարձերի համար
21. Տարբեր չափի ռետինե շրջանաձև տակդիրներ
22. Տարբեր տեսակի և չափի ռետինե «էսմարխի» գավաթներ
23. Տարբեր չափի մետրեյններներ՝ լատեքսից
24. Ռետինե պարկեր՝ երկբալոն հեղուկացրիչի (պուլվերիզատորի) համար
25. Պարկեր՝ գազափոխանակության համար
26. Պլաստմասսայե պարկ և ամբար՝ կոկոսաբույսի համար
27. Կաթնածծիչ՝ ապակե կազմությամբ (թասիկով և ռեզերվուարով)
28. Տարբեր տեսակի և չափի միզընդունիչներ
29. Տարբեր տեսակի և չափի ռետինե ծայրակալներ՝ ձեռնափայտի, հենակի և ոտքի պրոթեզների համար
30. Տարբեր տեսակի ռետինե բժշկական մատնոցներ
31. Տարբեր չափի ռետինե անատոմիական ձեռնոցներ
32. Տարբեր չափի ռետինե վիրաբուժական ձեռնոցներ
33. Լոգարանի համար ռետինե փչովի բարձեր
34. Թթվածնի համար տարբեր տարողության ռետինե և գործվածքային բարձեր
35. Ռետինե հիգիենիկ գոտի
36. Ցնցուղ (պոլիվիլ)՝ բժշկական նշանակության, տերմոպլաստե նյութից
37. Տարբեր տեսակի և չափի նախապահպանակ (պրոթեզվատիվ)
38. Ռետինե խցաններ՝ կաթի շշի համար
39. Տարբեր չափի ռետինե պարկ՝ սառույցի համար
40. Տարբեր չափի և տեսակի ռետինե պարկ՝ աչքի համար
41. Կաթի մանկական ծծակ
42. Փուչ ռետինե ծծակ (պուստիշկա)
43. Տարբեր տեսակի և չափի ցնցուղիչ
44. Տարբեր չափերի ռետինե տակդիր անոթ
45. Ռետինե բժշկական խողովակներ տարբեր տրամաչափի՝ վակուումային, դեռնաժային, լսողական, արյան փոխներարկման համար և ուրիշներ
46. Ներարկիչ՝ ներարգանդային «Պարույր» տեսակի հակաբեղմնավորիչ մտցնելու համար
47. Օժանդակ իրեր՝ բժշկական, պոլիէթիլենային
48. Պոլիէթիլենային ծորակ՝ «էսմարխի» գավաթի համար
49. Պոլիէթիլենային ծայրադիր «էսմարխի» գավաթի համար
50. Պոլիէթիլենային ծագար՝ թթվածնային բարձի համար

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար

Վ. Ստեփանյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
«ՀՐԱԶԴԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Մարշալ Բաղրամյան թաղամաս, Պուրակային 32, Հեռ. , Ֆաքս (+374 223) 2 34 64, էլ.փոստ hrazdanibk@mail.ru

716 N 16.12.2020թ.

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ
Պ-ն ԿԱՐԵՆ ԲՐՈՒՏՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Բրուտյան

Հայտնում եմ Ձեզ, որ 2020 թվականի դեկտեմբերի 04-ին „Հրազդանի Բժշկական Կենտրոն,,ՓԲԸ-ի կողմից հայտարարվել է գնումների(ARMEPS) էլեկտրոնային համակարգի միջոցով, գնանշման հարցման ընթացակարգով ՀԲԿ-ԳՀԱՊԶԲ-20/0201 ծածկագրով մրցույթը: Մրցույթին մասնակցության հայտ են ներկայացրել թվով 34 ընկերություններ ; Մրցույթը անցկացվել է „Գնումների մասին,,ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով,որի համաձայն ս/թ դեկտեմբերի 14-ին անցկացվել են բանակցություններ բոլոր մասնակիցների հետ: 14 դեկտեմբերի 2020թ-ին ստացվել է նաև դիմում-բողոք „Լևոն Լամարա Դեղատուն,,ՍՊԸ-ի կողմից, որը վերաբերվում է 18, 35.36.37.38.50.52.և 53-րդ չափաբաժիններին: Նշված չափաբաժիններիգծով գնային առաջարկ է ներկայացվել „Լեյկո,,ՍՊԸ-ի կողմից: Համաձայն ԱՏԳ ԱԱ դասակարգման՝ 35.36.37 և 38-րդ չափաբաժինները դասակարգված են 9018 ծածկագրին, իսկ 18. 52 և 53-րդ չափաբաժինները՝ 3005 ծածկագրին:

Հիմք ընդունելով նշված բողոքը, խնդրում եմ տալ պարզաբանում՝ 9018 և 3005 ծածկագրերով նշված ապրանքները ենթակա են արդյոք ԱԱՀ-ով հարկման թե՛ ոչ :

Առդիր 8 (ութ)թերթ

Կանխավ շնորհակալություն:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ

Նելլի Ավետիսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Վեբ կայք՝ www.minfin.am, ֆիննախ.հայ
Էլ. փոստ՝ secretariat@minfin.am
Հեռ.՝ (+374 11) 800 033

N _01.1/26-1/19576-2020__

<<__27__>> _դեկտեմբերի__2020 թ.

«ՀՐԱՋԴԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ի
ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ՏԻԿԻՆ ՆԵԼԼԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

Ի պատասխան 16/12/2020թ.
թիվ 716 գրության

Հարգելի տիկին Ավետիսյան

Ուսումնասիրելով գրությունը՝ հայտնում ենք հետևյալը.

ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք)՝ 64-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի համաձայն՝ ԱԱՀ-ից ազատելը Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝
ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի
նկատմամբ ԱԱՀ չհաշվարկելն է,

2) 2-րդ մասի 12-րդ կետի համաձայն՝ ԱԱՀ-ից ազատված գործարքներ են համարվում
դոնորային արյան և դրա բաղադրամասերի, մայրական կաթի, պրոթեզաօրթոպեդիկ պարա-
գաների, բժշկական տեխնիկայի և բժշկական նշանակության ապրանքների օտարումը,
բժշկական կազմակերպություններում բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում
պացիենտների պատրաստած ապրանքների օտարումը, աշխատանքների կատարումը,
ծառայությունների մատուցումը: Նույն կետով սահմանված արտոնությունների կիրառության
շրջանակը սահմանում է Կառավարությունը:

ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի «Ավելացված արժեքի հարկից
ազատման արտոնությունների կիրառության շրջանակները սահմանելու մասին» թիվ 1317-Ն
որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված թիվ 3 հավելվածի՝

1) 3-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի համաձայն՝ բժշկական նշանակության ապրանքները ախտորոշման, կանխարգելման, բուժման, անզգայացման ժամանակ օգտագործվող այն բժշկական նշանակության ապրանքներն են, որոնք՝

ա. դասվում են Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի դասակարգչի 3005, 3006, 3701 10, 3702 10, 3707 90, 4014, 5601 21, 5601 22 ծածկագրերին,

բ. ներառված են նույն հավելվածի բժշկական նշանակության ապրանքների ցանկում,

2) 5-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի համաձայն՝ բժշկական տեխնիկա են համարվում դեղերի պատրաստման, բուժման, ախտորոշիչ հետազոտությունների անցկացման, վերականգնողական բուժման և այլ բնույթի բժշկական օգնության ու սպասարկման ծառայություններ իրականացնելու համար անհրաժեշտ բժշկական հատուկ և օժանդակ ապարատները, գործիքները, տրանսպորտային միջոցները, սարքերը և այլ սարքավորումը: Ավելացված արժեքի հարկից ազատման արտոնության կիրառության նպատակով բժշկական տեխնիկային դասվում են՝

ա. Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի դասակարգչի 9018, 9019, 9020, 9022, 9023, 9402 խմբերին դասվող բժշկական տեխնիկան,

բ. ներմուծվող այն տեխնիկան և սարքերը, որոնց ուղեկցող փաստաթղթերում (տեխնիկական անձնագիր, հաշվարկային և բեռնառաքման այլ փաստաթուղթ) նշված է, որ դրանք նախատեսված են բժշկական օգնության և սպասարկման համար:

«Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնց ներմուծումն ազատված է ավելացված արժեքի հարկից» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի առաջին պարբերության համաձայն՝ նույն օրենքով հաստատվում է ավելացված արժեքի հարկ վճարող համարվող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա ներքոհիշյալ այն ապրանքների ցանկը, որոնց ներմուծումն ազատված է ավելացված արժեքի հարկից: Նույն հոդվածի ցանկում ներառված են ԱՏԳ ԱԱ 9018 (Սարքեր և հարմարանքներ՝ բժշկության, վիրաբուժության, ատամնաբուժության կամ անասնաբուժության մեջ կիրառվող (ներառյալ՝ սցինտիգրաֆիկական ապարատները) ծածկագրին դասվող ապրանքները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ ԱՏԳ ԱԱ 3005 և 9018 ծածկագրին դասվող ապրանքների օտարումը, ինչպես նաև ԱՏԳ ԱԱ 9018 ծածկագրին դասվող ապրանքների՝

ավելացված արժեքի հարկ վճարող համարվող կազմակերպությունների և
անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծումն ազատված են ԱԱՀ-ից:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝



ԿԱՐԵՆ ԲՐՈՒՏՅԱՆ

ООО «Лейко»
РА г. Ереван, Давидашен 1 кв. 17/3
РА г. Ереван, Фучика 27
ЗАО «Инекобанк, Туманяна 1
р/с 205002215023
ИНН: 01224924
Тел.: (37410) -35-03-03, (37410)-34-95-63
E-mail:leykoalex@gmail.com



«Լեյկո» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Դավթաշեն, 1 թաղ. 17-3,
ՀՀ ք. Երևան, Ֆուչիկի 27
«Ինեկոբանկ» ՓԲԸ, Թումանյան 1
Հ/Հ 205002215023
ՀՎՀՀ 01224924
Հեռ.: (37410) -35-03-03, (37410)-34-95-63
E-mail:leykoalex@gmail.com

Հրազդանի Բժշկական Կենտրոն ՓԲԸ Գնումների հանձնաժողովին

